

#### IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐՂՈՒՄ

2015թ. ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ.-ին ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգին» համապատասխան:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում գործող տեղային ցանցը միավորել է 223 համակարգիչ, որոնցից ժամանակակից տեխնիկական պահանջներին բավարարում է 86-ը կամ 38.6%-ը:

ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի և մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և ինտերնետային կապը՝ համապատասխան գործակալությունների տարածքային ստորբաժանումների, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ: ՀՀ ԱՎԾ-ի ԳՀՀ վարչությունում կատարվել են աշխատանքային վերադասավորումներ՝ գործող ցանցերին միացվել են նոր համակարգչային սարքավորումներ, վնասված ցանցային մալուխները փոխարինվել են նորերով, իրականացվել են հակավիրուսային պաշտպանիչ պրոֆիլակտիկ գործողություններ:

Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ, սարքավորումների վերանորոգման և պրոֆիլակտիկ աշխատանքներ: Իրականացվել է ՀՀ ԱՎԾ դոմենային, մոդեմային և այլ սերվերների կառավարում:

Սպասարկվել է ՖՏՊ սերվեր (File Transfer Protocol), որի միջոցով կատարվել է ֆայլերի փոխանակում ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջև:

Իրականացվել են ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայքերի ([www.armstat.am](http://www.armstat.am), [www.armstatbank.am](http://www.armstatbank.am), [www.armdevinfo.am](http://www.armdevinfo.am)), ներքին ծառայողական կայքերի (intranet, web) տեղեկատվական նյութերի տեղադրման, սպասարկման, արդիականացման և շարաքական պարբերականությամբ արխիվացման աշխատանքներ: ՀՀ ԱՎԾ [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքէջի Գլխավոր էջի «Օրենսդրություն/ՎՊԽ նորմատիվ որոշումներ» բաժնում ավելացվել են 2004-2015թթ. որոշումները, «Հրապարակումներ» բաժնում ավելացվել է ֆայլերի MS Excel ձևաչափերով ներկայացնելու հնարավորությունը, «Միջազգային վիճակագրական համագործակցություն» բաժնում ավելացվել է նոր ենթաբաժին՝ «ԹՎԻՆԻՆԳ-II փուլ», որտեղ տեղադրվել են ԵՄ ԹՎԻՆԻՆԳ երկամյա ծրագրին վերաբերող նյութերը:

Տեղադրվել են նոր և փոփոխված պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը՝ MS Excel և MS Word ձևաչափերով:

Շարունակվել են 2012թ. սեպտեմբերի 14-ից [www.armstatbank.am](http://www.armstatbank.am) կայքէջով հանրությանը հասանելի դարձած ArmStatBank տվյալների բազայի աղյուսակների ստեղծման և լրամշակման աշխատանքները՝ PX-Web ծրագրով, PC Axis ձևաչափով, որը հնարավորություն է տալիս սպառողին վիճակագրական տեղեկատվություն

ներբեռնել MS Excel, CSV և այլ ձևաչափերով: Կայքէջը համալրվել է 5 նոր վիճակագրական աղյուսակներով (բազաներով):

2015թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ում շահագործվել է թվով 54 ծրագրային համակարգ, ինչպես նաև տարբեր ոլորտների 26 ծրագրային համակարգերում կատարվել են թվով 50 ուղղումներ, փոփոխություններ և ավելացումներ: Մշակվել է 2 նոր ծրագրային համակարգ: Ուղղումներ, փոփոխություններ են կատարվել նաև MS Excel ձևաչափով պետական վիճակագրական հաշվետվական ձևերի մեջ, ինչպես նաև դրանց համապատասխան MS Access ֆայլերի մեջ:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի որոշ կառուցվածքային ստորաբաժանումներում բազմաբնույթ հաշվարկների կատարման համար SPSS ծրագրային փաթեթի միջավայրում մշակվել են մոդուլներ և կառուցվել է ընտրանք: